

ՀՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐԻՆ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՄԱՐՈՒԼՈՒՄ

ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսած Ռ. Հ. Խաչատրյանի «ՀԱՅ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՐՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆՑՅԱԼԻՑ» դիրքը, որը նվիրված է Բուլղարիայում հրատարակված հայերեն «Կարմիր լուրեր» թերթի պատմությանը, հետախուզության և բարձր գնահատականի է արժանացել բուլղարական մամուլի կողմից: Գրքին նվիրված նատուկ գրախոսականներ են հրատարակվել մի շարք պարբերականներում:

Բուլղարիայի Կոմպարտիայի օրգան «Ռուստեխնիկո ղելո» թերթում տպագրված գրախոսականից բացի գրքի գնահատության անդրադարձել է նաև Բուլղարիայի Գիտությունների ակադեմիայի ամսագիրը («Исторический преглед», 1961, № 4): Պատմական գիտությունների թեկնածու Յ. Տոդորովան արժեքավորելով գիրքը գրում է, «Ռ. Հ. Խաչատրյանի գիրքը բուլղարական Կոմունիստական պարտիայի կողմից մեր երկրի ազգային փոհամասնությունների և մասնավորապես հայ փոհամասնության շրջանում տարված ինտերնացիոնալիստական հետևողական գործունեության հիշ հայտերի կերի ուսումնասիրության բանկազին աղբյուր է: Սակայն հայերեն լեզվով լույս տեսած այս գիրքը դժվար կարելի է օգտագործել մեզ մոտ: Ահա թե ինչու, մենք չեմոտեն հանձնարարում ենք բուլղարերեն թարգմանել այն: Բուլղարական պատմագրությունը դրանով մեր պարտիայի փառավոր պատմության նոր աղբյուր ձևով կրերի»:

Բուլղարական Կոմպարտիայի պատմության հարցերը լուսարանող պարբերականը («Известия на института по истории на БКП») անդրադառնալով Ռ. Խաչատրյանի գրքին մատենանշում է, որ հեղինակն օգտագործել է Առֆիայի և այլ հաղախների արխիվների հարուստ նյութերը, ընթերցողներին ծանոթացնում է գրքում շոշափված խնդիրներին, պատմում «Կարմիր լուրերի» գործունեության մասին: «Քր հետախուզական աշխատությունում, — գրում է գրախոսության հեղինակը, — Ռ. Հ. Խաչատրյանը յուսաբանում է Բուլղարիայի Կոմունիստական պարտիայի գործունեության կարևոր կողմերը, ընդգծելով, որ Բուլղարիայի հայ կոմունիստական մամուլի պատմությունն անխզելիորեն կապված

է ՔԿՊ գործունեության հետ... Գիրքը ցույց է տալիս, որ հեղինակը նրա վրա սիրով ու հետախուզությամբ է աշխատել: Բուլղարիայում եղած ժամանակ նա այցելել է այն տեղերը, ուր գոյություն են ունեցել և աշխատել են հայկական կոմունիստական խմբակներ: Ռ. Հ. Խաչատրյանը շատ ջանքեր է քափել պարտիական փաստաթղթերի, տպագիր նյութերի և ողջ մնացած պարտիական գործիչների հիշողությունների հավաքման գործում... Այնպիսի աշխատություններ, որպիսին Ռ. Հ. Խաչատրյանի գիրքն է, պահպանում և ամրապնդում են բարեկամությունը բուլղար և հայ ժողովուրդների, բուլղար և սովետական մյուս ժողովուրդների միջև»:

* * *

Սովետական Հայաստանում լույս տեսած գիտական հրատարակությունները պարբերաբար գրախոսվում են Մխիթարյանների «Բազմավեպի» կողմից: Ամսագիրը մասնավորապես մշտական հետախուզություն է ցուցաբերում ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակված գրքերի նկատմամբ:

«Բազմավեպում» (1960 թ., № 1—2) ընդարձակ գրախոսական է տպագրվել Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտի գիտական աշխատող Արմենուհի Սրապյանի «ՀՈՎՀԱՆՆԵՄ ՆԻՉՆԿԱՑԻ» գրքի մասին: Գրախոսականի հեղինակ է. Քյուրտյանը սովետահայ գիտնականի այս ուսումնասիրությունը համարում է «ամենեն անհամբերությամբ սպասած» գործերից մեկը և իր «մասնավոր հանույնով» գրած գրախոսականում այն համարում է «մեծապես գնահատելի և արժեքավոր գործ»: Գրախոսականի հեղինակը միաժամանակ հետազոտության մեջ շոշափված մի հանի հարցերի շուրջը անում է մի շարք դիտողություններ, որոնք ուսումնասիրվող հեղինակին «ավելի ևս նշտված և կենսական շարժանները պարտականություն են թելադրված են»:

«Բազմավեպում» (1961 թ., № 1—2) նույն գրախոսողը հանդես է եկել նաև Գրականության ինստիտուտի մի այլ գիտաշխատողի՝ Մայիս Ավդալբեգյանի ե. ԿեղևնեճճՈՒՆ նվիրված ուսումնասիրության կենսագրմամբ: Այս գիրքը, — գրում է գրախոսողը, — «մեծապես շահեկան է և

անտարակույս բոլոր հայ մատենագրությամբ զրազվողներուն համար կարևոր: Առանձին զլուխների մասին խոսելով, Հ. Քյուրտյանը մի արհ հարցերում իր քրաջարձակ համաձայնությունն է հայտնում զրհի հեղինակի արտահայ-

տած կարծիքների հետ և միաժամանակ իր գիտողություններն է անում որոշ հարցերի շուրջը: Ընդհանրապես, նկատում է զրախոսողը, «Ավդայրեզյանի այս աշխատությունը ընտիր գործ մրն է, շատ լավ կատարված»: